16436

361
P-31

1898

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԵՒ
ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
1897–1898

Ուսում. Տարեշրջանի

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅ. ԲԱՐ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1898

ԴԱՎՐԷԺ

361
Թ-31

Տպարան Թաւրիզու Հայոց Արամեան Դպրանոցի

2002
2010

361
Թ-31
370
Q353-ՏԵ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Publicnaja Biblioteka
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1897—98 Ուսում. Տարեշրջանի

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱՆԱՆ ԸՆԿ.

Թաւրիզի Հայուհեաց Բարեգ. Ընկերութեան նախկին Վարչութեան 15 Մարտ 1898 թուով հրատարակած Վեցամեայ Տեղեկագրում խոստացուած էր տալ Յարգելի հայ հասարակութեան 97—98 տարուայ գործառնութիւնների տեղեկագիրն ու հաշուեկշիռը. Վարչութիւնս փութաց որոշուած ժամանակին արպագրել խոստացուած գործը՝ որի մի մասը ծանօթ է Վեցամեայ Տեղեկագրի վերջում:

Նախորդ Վարչութեան կանոնադիր շրջանը այս տարի աւարտած լինելով, Ապրելի 29 ին կայացած Ընդհանուր Ժողովում միաձայն քուէով ընտրուեցաւ ներկայ Վարչութիւնս: Ընդհանուր Ժողովը յոտնկայս շնորհակալութիւն յայտնեց Նախորդ Վարչութեան և ի մասնաւորի իւր Նախագահ Տիկ. Իսկուհի Յակոբեանցի արդիւնաշատ գործունէութեանց համար:

Վերջին երկու տարուայ մէջ տաճկական կոտորածներից փախած վասպուրականցի գաղթականներին սնուցանելու ու պահպանելու ծանր հոգսը վարչութեանս համար ամենից աւելի զբաղեցնող գործն եղաւ: Նախորդ Վարչութեան օրով ու նախաձեռնութեամբ կազմուելիք Աղէպպոյնամ Ընկերութիւնը զանազան արդելքների պատահեց, որը կարող էր մեծ օգուտ տալ գործին և օժանդակ հանդիսանալ վարչութեանս. թէպէտև Վարչութիւնս լեայցս է, թէ ներկայ Թէմական Առաջնորդ Գէորգապետ Սահակ Արքեպիսկոպոս Այվազեանի ջանքով իրականութիւն կատա-

նայ այդ օգտակար ձեռնարկութիւնը։ Եւ որովհետև գաղթականները խումբ-խումբ սկսան ծանրանալ Պարչութեանս վրայ, բնականաբար ստիպուեցաւ կրկին և կրկին դիմել Թաւրիզի Առաջնորդարանին գաղթականների նկատմամբ դարման խնդրելու, բայց ընդհանրապես աջակցութիւն չգտաւ դժբաղդաբար. մինչդեռ միւս կողմից գաղթականք՝ չկարողանալով այլևս մնալ Մուժամբար և Ալչէմուլք գիւղերում, թափուեցան Թաւրիզ եղեալ վիճակի մէջ։ Պարչութիւնս շտապեց օգնութեան հասնել, տեղաւորել նորանց, կանոնաւոր սնունդ տալ և մաքրել ու ծածկել մերկութիւնները։ Ըստ որում գաղթականներն ապրուստի ու աշխատանքի տեսակէտից աւելի նպատակայարմար համարեցին Սալմաստ տեղափոխուիլ. վասնզի Պարչութիւնս մտածեց ձեռք բերել հրամանագիր Պարս. Դահանդապետից, զի մի՛ գուցէ ողորմելիները ճանապարհին պատահէին այլև այլ զրկանքների ու արգելքների, որը և յաջողեցաւ առնել Պարս Ամիր-Նիզամից ու ճանապարհել նրանց Սալմաստ վճարելով բոլորի փոխադրութեան վարձն ու անհրաժեշտ կարիքները։ Թաւրիզում մնացող հիւանդ ու անկարները մինչև հիմայ էս ընդունում են բժշկական դարման, որի համար Պարչութիւնս պարտականութիւն է համարում յայտնել շնորհակալութիւն Ընկերութեանս Ռ. Է. Պ. Աղանեանին՝ իւր անվճար և անձնուէր ծառայութեանց համար՝ որ մինչև այժմ կատարել է։ Պարչութիւնս յայտնում իւր շնորհակալութիւնը նաև Պ. Ռ. Է. Փաշաեանին՝ որ չէ խնայել իւր կողմից գաղթականներին օգնելու դեղերով և այցելութիւններով։ Դէպ Պարչութիւնս՝ հաշուելով տեղացի և գաղթական հիւանդների շատ անգամ անյարմար բնակարաններն ու թերակատար խնամքը, վաղուց միտք է յղացել հիմնել մի հիւանդանոց համեստ ծրագրով, որպէսզի պատշաճ հոգածութիւն վայելեն անբաղդ հիւանդները, եթէ միայն թոյլատրեն Ընկերութեան նիւթական վիճակը։ Պարչութիւնս միշտ տրամադիր է ձեռնարկելու այդ խիստ անհրաժեշտ հաստատութեան, եթէ ձեռք կարկառեն ազգի բարերարները։

Պարչութիւնս դուրս չեկած վասպուրականցի գաղթականների պատճառած ճգնաժամից, Խոյից Պ. օթուռ և Պատ գիւղացիների լաց ու կոծի ձայնը հասաւ։ Աղքատութիւնն ու շրջապատող սպառնագին հանգամանքներն այն վիճակին էին հասցրել խեղճերին, որ սկսել էին դիմել մահմեդականութեան։ Ձէր կարելի անտարբեր մնալ. տագնապալից էր կացութիւնը։ Պարչութիւնս շտապեց մի Պարոնի իւր կողմից պատգամաւոր ուղարկել անմիջական օգնութիւն հասցնելու։ Խոյում ընկերութեան փողով առնուեցաւ 8 եղ և բաւական քանակութեամբ ցորեան ու բաժանուեցաւ 39 ընտանիքի, որոց համար ծախս եղաւ Խոյում 1667 ղռ. 25 կոպ։ Պ. օթուռ և Պատ գիւղերի հայերից առ հարկի մահմեդականութիւն ընդունողների և առհասարակ գաղթականների մասին Պարչութիւնս պաշտօնագրութեամբ ընդարձակ զեկուցումն է արել Ազգընտիր Պ. Եհափառ Հայրապետին և յանուն գաղթականների ստացած է Նորին Պ. Եհափառութիւնից 400 ռուբլի նպաստ, բացի 500 ռուբլուց, որ շնորհած էր Ընկերութեանս անցեալ տարի։ Ընդուշտ Պարչութիւնս իւր բազմազբաղ գործերի մէջ անկարող կը լինէր ձեռք մեկնել նաև գաղթականներին, եթէ աջակից չունենար Յարգելի Հայ Հասարակութեան համակրութիւնն ու մարդասէր ազգայինների բարերար ձեռնտուութիւնը։ Խշարս այլ հասոյթների Պարչութիւնս գոհունակութեամբ ստացել է Նո-Կրպա-ռ-Ընկ-Հնէր հետևեալ անձնաւորութիւններից, որոց յայտնում իւր խորին երախտագիտութիւնը։ Ամերիկացի Միսիոնարներից 700 ղռ.— Հանգուցեալ Պոնտական Տէր-Յակոբեանցի կտակից 1000 ղռ.— Պաշտ Աղաւէլ Յովսեփեանից 250 ղռ.— Խղբարք Թումանեաններից 2000 ղռ.— Առաքել Ծատուրեանից 600 ռուբլի, որ է 3225 ղռ. 80 կոպ.—

Նիկիտա Իվանիչ Մելիքեանից 200 բուբլի, որ է 1075 դր. 25 կոպ. իւր նուիրած 1000 բուբլու է. վճարքը.—Մոսկուայում Թովմաս Թովմասեանցի միջոցաւ հանգանակուած 200 բուբլի, որ է 1075 դր. 25 կոպ.— Հ. Տէր-Առաքելեանցի միջոցաւ Բալ-Ֆրուշից 400 դր.— Բագուի մարդասէր մշակների մէջ հանգանակուած Սիմէոն Խաչանեանի ձեռամբ 225 դր. 90 կոպ.— Տիկ. Մարիամ Պօղոսեանից 200 դր.— Վարչութեանս Ընդամուհի Տիկ. Մարիամ Մասումեանից 500 դր. Զանազան բարեսէր անձինքներից 157 դրան:

Համազան Պ. Կարապետ Օհրաբեանց ընկերութեանս վերնակախաղի տոմսակներից 10 հատ առած և նուիրածէ Ընկերութեանս: 5 Տոմսակ ևս նուիրել է նախկին Փոխանորդ Յովսէփ Եպիսկոպոս Սարգեան:

Բացի հիւանդ ու անկար դաղթականներից՝ որոնք խնամուել են ընկերութեան հոգածութեան ներքոյ, աշխատանքի ընդունակներին, լինի այր թէ կին, Վարչութեանս ջանքերով հայթայթուել է զանազան պարապմունք, հնար եղածին չափ առաջն առնելու համար մուրացկանութեան յոռի սովորութեան. իսկ չունևոր երիտասարդներին դիւրութիւն տալու մասք տուել է թեթև գործիքներ՝ խոփ, լուծ և այլն: Վարչութիւնս՝ բարեսիրելու համար գեռահաս դաղթական աղջիկների ապագան, կարգադրած է իւր պաշտպանութեան տակ ունենալ մի տուն, նրանց ժողովել այն տեղ ու գործադրութիւն տալ: Այս վերջին ամիսներում Թաւրիզում գոյութիւն ունեցող հայի տաղնապը տեսնելով, վարչութիւնս ընկերութեան Ընդամուհիների շրջանում հանգանակեց ալիւր, հայ թխել տուեց և բաժանեց դաղթականներին: Վարչութիւնս ձեռնարկել է նաև վաղօրօք ձեռք բերել որոշ չափով ալիւր նեղ հանգամանքում սոված չթողնելու աղքատներին: Միատեղ հաշուած այն անհնարն գումարը, որը նը-

պաստ է տրուել տեղացի կարօտներին, մինչև յուլիսի 1ը իպէտս դաղթականաց ծախս է եղել 9742 դրան 60 կոպ. ընկերութեան դանձից:

Այս տարի օտարերկրացի մի ուսուցմասէր վաճառական ընկերութեանս գիմած և առաջարկած էր իւր կողմից տարեկան 100 թուման մշտական նպաստ յատկացնել Աղրպատականում մի գիւղական ուսուցարանի բացմանը, եթէ ընկերութիւնը իւր բարոյական պատասխանատուութեան ներքոյ պահէ ուսուցարանը և նիւթապէս աջակցի: Վարչութիւնս ուրախութեամբ ընդունեց Պարոնի առաջարկը և ձեռնամուխ եղաւ ուսուցարանը բանալ Ղարադաղում. բայց որովհետև Եղբարք Թումանեանները և հանդուցեալ Մնացական Տէր-Յակոբեանի այրին՝ Տիկ. Աղեղ բանալուն ուսուցարաններ այնտեղ յառաջիկայ տարուանից. ուստի Վարչութիւնս հետամուտ եղաւ որոնելու ուրիշ յարմար կենտրոններ, երբ միմեանց յետևից Ուրմիից և նրա կից Բարանդուզ գաւառից հասան մտմտքիչ նկարագրութիւններ 1200 տնից դուրս գաւառից հասան մտմտքիչ նկարագրութիւններ 1200 տնից դուրս գաւառի հայ ընտանեաց մտաւոր ու նիւթական ողբալի կացութեան մասին, որոնք բնակուած են 39 հայաբնակ գիւղերում, ուր ըստ մեծի մասին չկան ուսուցարաններ, ժողովուրդը չունի քահանայ, չունի և հոգևոր մխիթարութիւն, շրջապատուած միևնոյն ժամանակ օտարադաւան կլանող տարրերից: Վարչութիւնս բոլորովին մոռացուած, և իբրև անպէտք անօթ մի անկիւն նետուած յիշեալ վայրերից Բարանդուզի գիւղերում 2 ուսուցարան բաց անել անհրաժեշտ համարեց, տարեկան 280-300 թուման բուդժէսով, որոնց համար երկու ուսուցիչ վարձած և ուղարկած է արդէն, կատարելով հարկաւոր բանակցութիւններ Գեր. Սահակ Եպիսկոպոսի և Սալմասայի Առաջնորդական Փոխանորդ Դաւեան Խաչիկ

Վարդապետի հետ։ Հեռաբար Թաւրիզի Հայ. Բար. Ընկերութիւնը 1898 | 99 Ուսում. տարուանից կունենայ 2 գիւղական ուսումնարան Բարանդուզում. մին՝ ուսումնասէր պարոնի նպաստովն ու ընկերութեան աջակցութեամբը. միւսը սոսկ Ընկերութեան հաշուով։

Թաւրիզի Լիլաւա թաղի ուսումնարանների Հոգաբարձութիւնը դիմել էր Վարչութեանս մի պաշտօնագրով՝ բացատրելով ուսումնարանի դրամական անձկութիւնը և աւելի բարեկարգ դրութեան վերածելու անհրաժեշտութիւնը, և խնդրել դրամական նպաստ. Վարչութիւնս՝ նախապէս հարցը ենթարկելով ընդհանուր ժողովի Յունիս 11 ի նստի հաւանութեանը, որոշեց տալ այս տարուայ համար 400 Թուման նպաստ մինչև ի նոր տնօրինութիւն։

Թաւրիզ քաղաքացի Եղբարք Փանուէլեանց դրաւոր դիմումէն արել Վարչութեանս իրանց նախաձեռնութեամբ Մուժամբար գիւղում բացուելիք ուսումնարանի համար նիւթական օժանդակութիւն խնդրելու. Վարչութիւնս վճռեց յատկացնել այդ ուսումնարանին տարեկան 30 Թուման, գնահատելով խնդրի կարևորութիւնը։

Վարչութիւնս համաձայն իւր ծրագրի 38 րդ յօդուածի տրամադրութեան, որով պէտք է բազմակողմանի խնամք ունենայ Լիլաւայի Օր. ուսումնարանի վրայ, վաղուց ցանկութիւն է ունեցել իւր տրամադրութեան ներքև պահպանել այդ ուսումնարանը, ժամանակի պահանջմանց համապատասխան մի ուղղութիւն տալու նպատակով. միևնոյն ժամանակ իւր նիւթական ուժից վեր համարելով այդ՝ այս տարի դիմեց Պ. Գրիգոր Թումանեանցին իբրև բարերարի և խնդրեց նորա նիւթական աջակցութիւնը։ Վարչութիւնս՝ իւր ցանկացածն իկատար հանելու համար, լիասիրան սպասում է Ազնիւ Պարոնի համաձայնութեանը։

Խոյի շրջակայքում Սէյիդ-Աբադ գիւղացի Պ. Յովհաննէս խնդրել էր ընկերութեանս բարոյական հովանաւորութիւնը յիշեալ գիւղում իւր սեպհական ծախսով հիմնելիք ուսումնարանի համար. Վարչութիւնս շնորհակալութեամբ ընդունեց պարոնի առաջարկը, գրեց քաջալերական նամակ, խոստանալով միանգամայն նիւթապէս օգնելու և՛ ապագային՝ դրամական յաջող դէպքում։

Լիլաւայի ուսումնարանում ուսուցիչ կավկասեցի Յակոբ Խէրոդինեանի ամուսինը՝ Տիկ. Նունէ, ուսուցչուհի բերդաթաղի Օրիորդաց ուսումնարանին, անսպասելի հաւանդութեամբ վախճանուելով. Վարչութիւնս իւր պաշտպանութեան տակ ընդունեց երկամեայ Պաբրիել անուն որբ երեխին, և ընկերութեան հաշուով յանձնեց սանտուի խնամքին, պայմանաւ՝ որ Խէրոդինեան 1899 Մայիսի վերջին տանի իւր մանկանը։

Վարչութիւնս Համադանից և Սպահանից ստացաւ շնորհակալութեան նամակներ, նուէր ուղարկուած գրքերի մասին։

Վարչութիւնս իմիջի այլոց շնորհակալութիւն է յայտնում Պ. Բժիշկ Ա. Փաշաեանին, որը շաբաթական մի անգամ ընկերութեանս Արհեստանոցի Օրիորդաց ձրի դասախօսութիւններ է կարդացել Առանին Տնտեսութեան վերաբերեալ։

Պ. Մարտիրոս Նազարբէկեան իւր գրաւոր հրաժարականը ներկայացրեց Վարչութեանս քարտուղարութեան համար իւր ծանր զբաղմանց պատճառով։ Վարչութիւնս ակամայ ընդունեց իւր հրաժարականը, և ներկայ տեղեկագրում յայտնում է իւր շնորհակալութիւնը այն խստակ ծառայութիւնների և շիտակ խորհուրդների համար, որ՝ ամբողջ երեք տարի մատուցեց ընկերութեանս, առանց մի վարձատրութեան։

Իբր աննշան փոխարինութիւն այն համակրանքին՝ որ միշտ ցոյց է տուել դէպի ընկերութիւնս նախկին քաղաքապետ Լիմնը-Գովլէն, Վարչութիւնս իւր Արհեստանոցում պատրաստուած

մի ձեռագրած Լդգան նուիրեց Ղորին Վասեմ-Ընկերան ընկերութեան պատուաւոր անդամ Պ. Բաղդասար Մելիք-Սարգսեանցի միջոցաւ և արժանացաւ Ղորին Վասեմութեան շնորհակալութեանը:

Մեծանուն Գալդասաոնի մահուան ասիթով վարչութիւնս իւր անդամուհիների ծախսով ցաւակցական հեռագիր ուղարկեց հանգուցեալի ընտանիքին, և՝ ի փոխարէն ստացաւ ապագիր շնորհակալութեան թուղթ. իսկ Գալդասաոնի մեծ որդին Հերբերտ Գալդասաոն պ. Ռժիշկ Ալանեանի հասցէին ուղղած ինքնագիր նամակով Գալդասաոնի ամբողջ ընտանիքի կողմից ջերմ համակրութիւն և սրտագին ողջոյն էր յանձնարարում ընկերութեանս:

Տեսնելով Պարսկաստանում գորգագործութեան արհեստի օրէց օր ծաղկիլն ու նրա արտադրած օգուտը, նախորդ Վարչութեան 95 | 96 տարուանից հիմնած Արհեստանոցին, յառաջիկայ շրջանից, վարչութիւնս ասլուէ առաւել լայն ծաւալ, փափագելով ընդհանրացնել այդ արհեստը հայ ընտանեկան շրջանում. այս նպատակով ապագիր յայտարարութեամբ հրաւէր կարդաց հայ կանանց և օրիորդներին մանել ընկերութեան գորգագործարանը, սովորել արհեստը և նաև ստանալ չափաւոր վճարք:

Վարչութիւնս սովորական ուղղութեամբ շարունակում է Կաբ — Զեկ Արհեստանոցը և Մանկապարտէզը Կովկասից հրաւիրուած հմուտ ուսուցչուհիների առաջնորդութեամբ: Այստարի Արհեստանոցում կային 10 ձրիավարժ օրիորդներ. Մանկապարտիզում 12 ձրիավարժ երեխայք, ձրի ստանալով հագուստ և ճաշ: Լիլաւայի Օրիորդաց ուսումնարանում պահւում էին 33 սանուհիներ, որոնց համար Վարչութիւնս վճարել է ուսման թոշակ, հոգացել է դասական առարկաներ և համազգեստ. իսկ ուսումնարանին տուել է ձեռագործի բոլոր նիւթերը.

Վարչութիւնս պատիւ ունի յայտարարել Յարգոյ հայ հասարակութեան, որ Վարչութեան Գրասենեակը գտնուում է

Թումանեան Ուսումնարանի վերնայարկում, ուր կարող են աղատ դիմել ցանկացողներն և ստանալ ընկերութեան Քարտուղարից հաշիւների և գործառնութեանց մանրամասնութիւնները:

ՀԱՇՈՒԵ

1897—98

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵ-

ՊԱՐՏՔ

	ղուան.	կոպ.	ղուան.	կոպ.
Արհեստանոցի ծախք և վարժուհու ռոճիկ	3165	5		
Մանկապարտէզի ծախք „ „	3096	45		
Գաղթականաց տրուած նպաստներ	9742	60		
Զանազան ծախք և քարտուղարի ռոճիկ	1934	70		
Կահկարասիք գնուած	73			
Լիլաւայի Օր. ուսում. 33 սանուհին. ծախք	1085	40		
Գործագործութեան ծախք	661	40	19758	60
97 | 98 Տարուայ Դրամագլուխ			47863	5
			67621	65

ԿՇԻՌ

Ուսում. Տարուայ

ԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՊԱՀԱՆՋՔ

	ղուան.	կոպ.	ղուան.	կոպ.
96 | 97 Տարուայ Դրամագլուխ			41580	45
Ստացուած Նուէրներ	16097	50		
Արհեստանոցի մուտք և վիճակախաղ	3100	75		
Տօնածառի „	1460	65		
Անդամավճարներ	1210			
Ստացուած տոկոսիք	4101	30		
Ճերմակ փողի շահ	71		26041	20
			67621	65

Վարչութեանս ընդհանուր գործողութիւններից երևում է, որ ընկերութիւնս իւր էութեամբ նուիրուած է հայ և մտաւոր սնունդ տալու ժամանակիս բազմակարօտ դասակարգին Պարսկաստանում: Վարչութիւնս իւր սահմանափակ ծրագրի շրջանակից դուրս գալով, Թաւրիզից հեռու էլ է տարածում իւր գործունէութիւնը, և այդ միմիայն այն պատճառով, որ նա իւր միակ ոյժն է համարում Հայ Հասարակութեան Թանգ համակրութիւնն ու նիւթական օժանդակութիւնը, որի յուսովն ու շնորհիւն է իջել համարձակ գործի ասպարէզը:

Վարչութիւնս խանդավառ զգացումներով լի դէպի հայ Հքաւոր դասակարգի շահն ու բարեկեցութիւնը, իւր պատրաստականութիւնն է յայտնում աւելի և աւելի ընդլայնելու իւր ձեռնարկութիւնները, եթէ իրատ ամբ նիւթապէս քաջալերուի հայ ժողովրդից և մարդասէր անձինքներից: Վարչութիւնս խնդրում, դրամական նպաստ, գիրք և նամակ ուղարկել այս հասցէով:

„Վարչ-նի-ն Թաւ-րիզ Հայ-հեայ Բարեգործական Ընկեր-նեան.—

Société de bienfaisance des dames Arméniennes de Tauris, — TAURIS — Perse

Ընդամուհիք Վարչութեան
Նախագահ Սրբուհի Ամատունեան
Գանձապահ Մարիամ մելիք-Սարգսեան

Խորհրդական՝
Հռիփսիմէ Գիներծեան
Մարիամ Մասումեան
Օգաբել Եղիազարեան
Նանաջան Լեսայեան
Արծուիկ Նազարբեկեան

1 Օգոստոս 1898
Թաւրիզ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
ԵՐԵՎԱՆ, Մասնաճյուղ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013
<< Ազգային գրադարան >>
NL0049051
16 436